ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 64

«18» 07 2018թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-Ի N 22 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռաֆֆի Վորոնցովի Ասլանյանին Երևան քաղաքի դատախազի պաշտոնից ազատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետի պաշտոնում նշանակելու ու Գևորգ Սուրենի Բաղդասարյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետի պաշտոնից ազատելու և Երևան քաղաքի դատախազի պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի համապատասխանաբար՝ 11.07.2018թ. N 187-Ա և N 188-Ա հրամանները, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 9-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2016 թվականի հոկտեմբերի 26-ի N 93 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 22 հրամանում.

«Բաղդասարյան Գևորգ Սուրենի - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ»

պարբերությունը շարադրել հետևյալ կերպ.

«Ասլանյան Ռաֆֆի Վորոնցովի - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և

դատական ակտերի բողոքարկման վարչության պետ»,

«Ասլանյան Ռաֆֆի Վորոնցովի - Երևան քաղաքի դատախազ»

պարբերությունը շարադրել հետևյալ կերպ.

«Բաղդասարյան Գևորգ Սուրենի - Երևան քաղաքի դատախազ»:

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ